

նակ նոքա և շատ շուտով ապացուցին, որ արժանի էին այդ իրաւունքներին: Հապա մերոնք, հապա հայ կիւնը. չե՞ ուզում արդեօք հայ կիւնը ապացուցել, որ ինքն ևս արժանի է հասարակական տրիբունի, յառաջընթացի մրտենուն...:

Ա. Մ.

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

— Թիֆլիսում բժշկապետ Բ. Նաւասարդեանի նախագահութեամբ կազմուած է մի մասնաժողով, որ ծրագիր է մշակում «Աղբիւր» մանկական հանդիսի 25 ամեակը գալ աշնանը ըստ պատշաճի հանդիսաւոր տօնելու:

— Փետրուարի 8-ին Կահրէում, մեծ շքով ու խուռն բազմութեամբ, մասնակցութեամբ Մկրտիչ ծ. վ. Աղաւնունու, Պօղոս փաշա նուբարի, Երուանդ բէյ Աղաթօնի և այլոց, հողին է յանձնուել Արփիար Արփիարեանի մարմինը: Թէ եկեղեցում և թէ դերեզմանի վրայ խօսուել են շատ դամբանականներ: Դազաղը ծածկուած է եղել 24 ծաղկէպսակներով:

— Փետրուարի 22-ին Թիֆլիսում, «Աղբիւր—Տարաղ»-ի խմբագրատանը դումարուել է տեղական ռուս, հայ, վրացի և թուրք լրագրերի 20 ներկայացուցիչների ժողովը, կազմելու ժողնալիստ—գրողների մի միութիւն: Հարցի վերջնական լուծումը թողնուած է մի աւելի մեծ ժողովի, որ պիտի գումարուի ընդհանրապէս գրողներեց մօտ ապագայում:

— Պետերբուրգում կազմուած է մի մասնաժողով, որի մէջ մտնում են Մ. Կովալէվսկիյ, Կօրօլէնկօ, Ռէպին, Ստախովիչ, Լ. Անդրէէվ, Արսէնիէվ, մշակում է մի ընդարձակ ծրագիր առաջիկայ օգոստոսի 28-ին լրանալիք Լ. Տոլստոյի 80-ամեայ յօբելեանը շքեղօրէն տօնելու համար, տալով այդ յօբելեանին ոչ միայն համառուսական, այլ և համաշխարհային ընաւորութիւն:

— Մարտի 25-ին լրացաւ երկրիս փոխարքայի դինուրական ծառայութեան յիսնամեակը, որ տօնուեցաւ Թիֆլիսում շքեղօրէն: Հետեւեալ համարում կտանը նկարագրութիւնը:

— Թիֆլիսում դասախօսութիւններ է կարդում Պետերբուրգի բարձրագոյն կուրսերի դասախօս յայտնի անտեսադէտ Տոտովեանը:

— Կովկասի Հայոց բարեգործ. ընկերութիւնը որոշել է առաջիկայ սեպտեմբերից գաւառներում բանալ մի շարք տարրական դպրոցներ:

— Թիֆլիսում այժմ գործում է «Թիֆլիսի նահանգի հայերի մէջ օգտակար գիտութիւններ տարածող» հայ ընկերութիւնը:

— Փետրուարի 29-ին Թիֆլիսում, «Աղբիւր—Տարազ»-ի խմբագրատանը գումարուել է հայ հրապարակախօս գրականագէտների ժողովը, ուր ժողովականները արժարժեցւով վերջերս Կահիրէում գնտակի զոհ գնացած հրապարակախօս Արփիարեանի դէպքը, միահամուռ արձանագրութեամբ որոշել են՝ «Արտայայտել բոլորն զայրոյթի և նողկանքի զգացմունք թէ այդ սպանութիւնը կատարող ոճրագործների վերաբերմամբ և թէ այն բոլոր անձանց և հասարակական խմբակցութիւնների, որոնք դրչի մշակի և ազատ խօսքի դէմ գործ են գնում բռնի միջոցներ»:

— Յայտնի բարեգործ Տիգրան Աֆրիկեանը իւր գաւառական 10 դպրոցներն յանձնում է Կովկ. Հայ. Բարեգործական Ընկերութեան իրաւասութեան, միաժամանակ իւրաքանչիւր տարի ընկերութեան դրամարկղը մոցնելով թէ՛ յիշեալ դպրոցներին, թէ՛ դրամատիքական ընկերութեան և թէ՛ երեւանի թեմական Դպրանոցին իւր կողմից եղող 6300 ռ. տարեկան նպաստը:—Ընկերութեան խորհուրդը որոշեց ընդհանուր ժողովին առաջարկել ընտրել հայ բարեգործին պատուաւոր անդամ:

— Նոյն ընկերութիւնը պ. Պօղոս Բաթրէուկի Մելիքեանից նուէր է ստացել նորա Մարց գիւղում գտնուող հողից 14/2 դեսեատին: Միևնոյն ժամանակ պարոնը ցանկութիւն է յայտնել, որ եթէ ընկերութիւնը յիշեալ հողի վրայ որ և է շինութիւն կառուցանելու լինի—տայ անհրաժեշտ փայտեղէնը ձրիաբար:

— Նոյն ընկերութիւնը ստացել է պ. Հ. Սարաֆեանից ի յիշատակ նորա հանգուցեալ ամուսնու 100 ռուբլի:

— Կովկասի «Հայ. ուսուցչ. միութեան» հրատարակութեամբ լոյս տեսնուելիք «Նոր—Դպրոց» ամսագրի պատասխանատու խմբագիր է ընտրուած պ. Իսահակ Յարութիւնեանը,

իսկ խմբադրական անդամներ՝ Յովհ. Տէր-Միրաքեան, Տ. Ռաշ-
մաճեան, Սր. Արեղեան և Ս. Արտվեան:

— Թիֆլիսում հայ. դրամատիք. ընկերութիւնը բաց է
անում «Դրամատիքական Կուրսեր», որ տարեկան 3 ամիս պէտք է
գործէ:

— Փետրուարի 20-ին Օդէսայում տեղի է ունեցել շատ
շքեղօրէն աւանդական ուսանողական հայկական երեկոյթը,
ուր ի մէջի այլոց յաջող են անցել հայ ժողովրդական-ազգային
խմբական երգերն ու պարերը: Երեկոյթը թէ՛ բովանդակու-
թեան ու թէ՛ նիւթականի կողմից եղել է հիանալի:

— Փետրուարի 7-ին Մոսկուայում վախճանուել է ռուս
գրող Ա. Լերաշը: Լերաշը վիպասան էր գիւղական-շինական
կեանքի, ուղղութեամբ նաքօզնիկ, Գ. Ուսպէնսկու, Զլատով-
րասկու, Զառոսիմսկու ընկերներից: Նորա նշանաւոր դրուածք-
ներիցն են՝ «Դաշաեցու յիշատակարանը», «Մասնագէտ» «Ազ-
ջամուղջ»:

— Անխոնջ հնագէտ Ն. Մառը փետրուարի 22-ին, Մոս-
կուայի Լազարեան ձեմարանի դահլիճում, կարդացել է լիքը
հանգիտարանի առաջ երեք մասից բաղկացած մի ընդարձակ
դասախօսութիւն Անիի պեղումների մասին ընդհանրապէս:
Դասախօսութիւնը խորը տպաւորութիւն է թողել հանգիտատես
հայ և ռուս երկուսն հասարակութեան վրայ. տպաւորութեան
ուժեղացման նպաստել է մանաւանդ մոզական լապտերով
բաղմազան պատկերներ ցոյց տալը: Դասախօսութիւնը ունե-
ցել է մօտաւորապէս նոյն ծրագիրն ու բովանդակութիւնը, ինչ
որ յարգելի պրոֆէսորը կարգաց մօտ ժամանակներս Բաքում:
— Զուտ արդիւնքը դասախօսութեան, մօտ 700ռ., յատկացրուած
է պեղումների գործին:

— Թիֆլիսում հիմնուել է չքաւոր հրեայ աշակերտներին
օգնելու ընկերութիւն, որի նպատակն է նպաստել չքաւոր
հրեայ աշակերտներին մինչև համալրարանական կրթութիւն
ձեռք բերելը:

— Կովկասի փոխարքայի խորհուրդը իւր վերջին նիստե-
րից մէկում որոշել է յատկացնել մօրեխի ոչնչացման համար
500,000 ռուբլի: Իսկ այդ մօտին միջոցներ մշակուում է գիւ-
ղատնտես Սահակեանի խորհրդակցութեամբ:

— Նսրբո Միւնիսթէնում մեռաւ Մոսկուայի համալսարա-
նի աւսուցչապետ, ռուս յայտնի գրող, գիտնական, հասարա-

կահկան գործիչ և լաւ մարդ Ալէքսանդր Զուպրովը:

— Թիֆլիսի հայ դերասանական խումբը պատրաստուած է ներկայացնել Բ. Այվազեանի նոր պիէսը «Անի քաղաքի կործանումը» վերնագրով:

— Լեհաստանի Իվանգորոգ քաղաքում վախճանուած բժշկապետ Ադ. Տէր Յարութիւնեանցը թողել է մի մանրամասն հաակով 50,000 ռուբլու հարողութիւն բարեգործական-ազգային զանազան նպատակների համար և գործադրութիւնը կապի վերապահել է Ամենայն Հայոց կաթուղիկոսին ու Պօլսոյ Պատրիարքին:

— Ամոյս 9-ին Թիֆլիզում հայացած անդական (հայ, ռուս, վրացի, թուրք) գրականագէտների և ժուրնալիստների ընդհանուր ժողովում որոշուել է հիմնել ընդհանուր ընկերութիւն գրականագէտների, որի կանոնադրութեան մշակման համար ընտրուել է և մի մասնաժողով հետեւեալ ժողովականներից՝ պ. պ. Ղարիբի, Հ. Առաքելեան, Գոտուա, Շեստով, Քալանթար և Պիճիկեան:

— Թիֆլիզի Հայոց ազգաբնակիւն ընկերութիւնը նախապատրաստութիւններ է տեսնում հիմնելու Թիֆլիզում մի ազգագրական—հնագիտական քանդաւան և մի մարդաբանական—կովկասագիտական գրադարան, որին իբրեւ սկիզբ—հիմք ծառայելու է ընկերութեան անդամ պ. Ե. Լալայեանի նուիրած մօտ 5000 ռուբլի արժողութեամբ սեպհական գրադարանը:

— Իտալիայում մեռել է յատնի դրող Էդմոնտո Դ, Ամիլիորը, որի հրաշալի գրուածքները այնպէս յափշտակութեամբ կարգում է ամբողջ աշխարհը: Նորա սիրուն գործերից հայերէն թարգմանուած են՝ «Սիրտ», աշակերտի յիշատակարանը, «Փորրիկ թմբկահարը»: Դ. Ամիլիորի նշանաւոր վէպերից են՝ «Բարեկամներ», «Բանուորների վարժուհին» և այլն: Նորա «Սիրտ» գուածքի ա. տպագրութիւնը Իտալիայում 250 հազար օրինակ տարածուեց:

— Բաքուում Հայոց կուլտուրական ընկերութեան հրատարակութեամբ լոյս է տեսել «Պատանեկական գրադարան» երկշաբաթաթերթի I և II գրքերը:

